

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԵԱՐԻԱ

Տարեկան 12 ֆր.
Վեցամսեայ 6 «

ԱՐՏԱՍՈՒՂՈՒՆ

2 րիս մեկ ծրու ուլ)
Տարեկան 14 ֆր.
Վեցամսեայ 7 ֆ.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 տր.
Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԻՏԻ

—o—

Մանուցման տոմար
20 սանթիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇՈՒԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՍՑԵ

Rev Père G. Kalemkarian Michitar's
te ngasce N 4 Vienne

Rédaction du journal

"Iravounk"

(Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България)

—o—

Գրութիւնք եւ
չեւ տրուիր

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Երկուսն Որբախնամ ընկերու-
թեան Դուռ ընդհ. Ժողովը պիտի
գումարուի վաղը կիրակէ,
դեկտ. 2, կէս օրէ վերջ, Ժամը
ճիշդ 2ին, Ազգ. վարժարանի սր-
բահին մէջ:

Օրակարգ

- Ա.—Գործ. Ժողովոյ վեցամ-
համարառութիւն:
- Բ.—Գործ. Ժողովոյ նոր ընա-
րութիւն:
- Գ.—Ընդհանուր զիւանի հր-
րաժարեալ երկու անգամոց
ընտրութիւն:

Ուստի կը խնդրենք ընկերու-
թեան արգոյ անդամներէն, որ
ներկայս իւր հրաւիրագիր ընդու-
նելով բարեհաճին որոշեալ Ժա-
մուն ներկայ գտնուի:

Մնամք յարգանք
Ընդհ. Ժողովոյ Դիւան

Առնւապետ Առնւապետ
Ա. ՓԱՋԱՋԵԱՆ Թ. ԳՈՒՐԱԳԵՐԵԱՆ

Վառնա, 1 դեկտ.

ՄԵՐ ՇՆՈՐՀԱԿԱՆՔԸ ՈՒ ՅԱԻՐ

Շնորհակալութիւն մեր այն
ամեն բաժանորդներուն որոնք
վերջապէս հաճեցան իրենց բաժնի-
գինները զրկել: Բայց ցաւ է
յայտնել թէ կան դեռ կարգ մը
բաժանորդներ որք բոլորովին խուլ
և համար կը մնան մեր զեկոյցնե-
րուն ու թախանձանգին: Վերջին
անգամ ըլլալով, այգպիսիներուն,
որոնք Պուլկարիոյ, Ռումանիոյ և
Սերպիոյ մէջ կը գտնուին, 15
օր, իսկ Ամերիկա, Եգիպտոս և
ուրիշ հեռաւոր բնակիչներ գտնուող
ներուն ամիս մը ևս միջոց կ'ու-
տանք իրենց պարտքերը մեզ հաս-
ցնելու:

Այս պայմանաժամը լրանալէ յի-
տոյ պիտի հարկադրուինք չի վը-
ճարողներու անունները հրատա-
րակել վերջապէս:

Ասոնք պէտք է համոզուին թէ
թերթի մը հրատարակութիւնը փո-
քր ծախքով չըլլար, և այդ ծախ-
քըն ալ միշտ կանխիկ է:

ԱՐՃԱՍԱՐՃԱՆՔ ԽՈՒՔԻ

“ՄԱՌՇԱՆ”ՆԵՐՈՒՆ

Ամեն ճիգ թափել, որ խրամա-
տը՝ հետզհետէ լայննայ երկու
պայքարողներու միջեւ և հոգեւին
ցանկալ, որ այդ խելայեղ պայ-
քարին մէջ և ոչ մէկը հաշտարա-
րի դեր կատարէ ու վերջ դնէ մո-
լեգնութեան հասնող խորունկ ան-
հասկացողութիւններու, ասոնք են
ահաւասիկ տիրական մտահոգու-
թիւնը խօսքի մատչելին, որ
թէեւ առանց փոխարէնի կը վա-
ճառէ իր ապրանքը, բայց և այն-
պէս փոթորիկներ արժարժած ըլ-
լալու զլիւկվար պատիւը կը վա-
յնի միշտ հիմնագին:

Համակրանքի կեղծաւոր ժպի-
տը՝ լորձուքոտ դունչին վրայ,
սուտիկէ բարկութեան մը առ-
կայծող նշանները երկու չըլլալիք
աչքերուն մէջ, քեզի կը մօտենայ
ան օձերու պաղ ու գետնաքարի
գալարումներով ու կրակի խօսք,
լէ աւելի, բարկութեան, արգա-
հատանքի ու վշտի պոռնիկ շեշ-
տերով փարտալ:

— Զե՛ս գիտե՛ր, որչափ բարկա-
ցալ:

— Խե՛ղ ըլլալ, ի՞նչ կայ որ:

— Քիչ մնաց ահագին փոթորիկ
մը փրթել ու ես ինքզինքէս ելլե-
լով:

— Բայց ինչո՞րեմ ըսէ՛ք, ի՞նչ
կայ:

— Ի՞նչ պիտի ըլլալ. աս ինչը
քեզի դէմ սուկալի հայհոյանքներ
ըրաւ ու ես ալ բերին չափը տը-
ւի, ուրկէ մազ մնաց ահագին կը
ուր մը փրթէր մեր մէջ:

Քիչ մը անդին, նոյն այդ ան-
ձը հակառակորդիդ դառնալով՝

— Աղբար, չես ըսեր թէ քեզի
համար ի՞նչ փորձանքի հանդիպէի
կոր այսօր:

— Ի՞նչ կայ որ:

— Այս ինչը քեզի համար սանկ
ըսաւ, նանկ ըսաւ ու ես ալ իբր
բարեկամդ բնականաբար պաշտ-
պանեցի քեզի. ասոր վրայ իրա-
րու տուինք ու առինք զորս դու

պատուիրեցիր:

Ու մէկ օրուան մէջ քառասուն
անգամ թէ հարաւ փչող եւ թէ
հիւսիս իր ծամելիքները արշըն
մը կը բանայ զոհունակութեան
խօլ քրքիլով, երբ կը ահսնէ, որ
իր թունաւոր խօսքերը հասած
են այն գարշելի նպատակին, ո-
րուն համար սիրտ կուտայ ան,
չը գիտես, հոգեկան որպիսի նող-
կալի աղտոտութիւնով մը:

Այն օրը՝ որ երկու մարդ իրար
ձգած չէ, այն օրը՝ որ մէկին առ-
ջեւ սեւ անուանածը միւսին՝ ճեր-
մակ և մէկին ալ ճերմակ ըսածը
միւսին սեւ ընելով, իր նկարագը-
րի անգունութեան գիտնաւորի
դակութիւնը չէ ցոլացուցած փո-
ղոցէ փողոց, այն օրը սեւ է իրեն
համար ու մեռած, քէսաւ զա-
ցած է առւաւորը, որուն համար
յուզուած է խորապէս. Պէտք է
գոնէ կէս գիշերին գտնէ մէկը ու
իւր ապրանքէն քիչուկ մը ծախե-
լով, երթայ վերջապէս հանգիստ
խաղալու իր բանասարկութեան:
Աս է անոր հոգեկան տխուր
գիծակը:

Ու մենք տարաբաղդաբար մը-
տադիր լսելով զինք, օր մը պա-
կաւ չենք ընե՛ր քմիծաղը անոր
երեսէն: Անձնական գոհակ հա-
շիւներու գոհացումին մէջ, կը
մոռնանք ժամանակին արտաքին
գօրէն ճակատագրային վիճակը ու
տեղ կուտանք մեր գրկին մէջ այդ
մաշխաններու փոհակին, որպիսի
ծախապատիկ նստին հոն ու մեր
կրքերու գերագոյնութեամբ ապահո-
վին իրենց անորակելի ժամանցնե-
րը:

Եւ սակայն պէտք չէ այդպէս
ըլլալ:

Եթէ այսօր մեր կրքերը դժ-
բաղդաբար չը ոտնձուելու համե-
մատութեան հասած են, ես պի-
տի ըսեմ, հոգ չէ կռուինք, մի-
այն թէ արհամարհանքի պաղ
տուշով թրչենք մաշխաններու բո-
լոր մատուցումները և վստահ ըլ-
լանք թէ այդ կերպով համեմա-
տութիւնները պիտի նուազին տա-
կաւ ու մենք պիտի ուզուինք
քիչ ժամանակէն, դէպի լաւագոյն

ճանքան, մտածելու և գործելու:
Ուրեմն է՛ն առաջ, խորի՛ն ար-
համարհանք բոլոր բո՛ր ըսաւճինե-
ներուն ու բոլոր խօսքի անպատ-
կառ մաշխաններուն:
Դէս ոչ Դէն

Կ Ո Չ

ՎԱՌՆԱՅԻ ԿՐԹԱՍԷՐ ՇԱՅ ՀԱՍԱՐԱԿԱՆՔԵԱՆ

Ազգային երկսեռ վարժարանաց
նորընտիր Հոգաբարձութիւնն Նը-
կատի ունենալով ներկայ տարեշը-
ջանի պիւտճէին անհաւասարակը-
ռութիւնը, դիմում ըրաւ տեղւոյս
պատուարժան Թաղական Խորհրդ.
դին իր տարեկան վճարելիք դը-
րամի քանակը որոշելու, որպէսզի
Հոգաբարձութիւնն ալ ըստ այնմ
իր պիւտճէն կարգադրէ:

Բայց ցաւ ի սիրտ կըսենք թէ՛
Պատ. Թաղ. Խորհուրդը հակա-
ռակ իր բերանացի խոստմանց,
զոր քանիցս յայտարարած էր թէ
տարեկան 4000 ֆր. կարող է տալ,
այժմ պաշտօնապէս կիմաքնէ թէ
միմիայն 2300 ֆրանք կարող է
ազգային վարժարանաց յատկա-
ցնել, աւելի ոչ երբէք: (*)

Եւ որովհետեւ ներկայ 1901-
1902 տարեշըջանի համար ազգա-
յին վարժարանաց պիւտճէն Պատ.
Թաղ. Խորհուրդը նախորդ տարե-
շըջանէն մնացած պարտքով եւ
ծախսերով ի միասին 8800 ֆր.
ըրած է, մինչդեռ հասոյթը 4300
ֆրանքի կը հասնի, որուն 2300
ֆրանքը Թաղականութեան տալիք
դրամն է և մնացեալ 2000 ֆր.ն
ալ պիտի գոյանայ երկսեռ աշա-
կերտաց ամսաթոշակներէն, հե-
տեւաբար 4500 ֆր. բաց մը կու-
նենայ ներկայ տարուան վարժա-
րանաց պիւտճէն. որն լրացնելու
համար, նորընտիր Հոգաբարձու-
թիւնն կուգայ ներկայ կոչով դի-

(*) Ինչո՞ւ այս պաշտօնական հակա-
տութիւնը, նախ 4000 խոստանալ ու
յետոյ 2300 իջնել: Թաղ. Խորհուրդը
արդեօք նորընտիր Հոգաբարձուները
վատեցնել կը փնտայ որ հրաժարին
ու ամեն գործ կրկին իրեն ձեռք մը-
նալով ուղածուն պէս կապեն ու ար-
ձակեն: Կը վերադառնանք:
Դիւ. Խրմ.

օրակարգին ամբողջ վճարեց, ամեն 15 օրն անգամ մը նորոշափ դուստար ստանալու պայմանաւ: Թշուառ եւ անտանելի կեանք: Ամեն հասակէ երկուսեւ քաղմուտի մը փութաց Ս. հաղորդութիւնն առնելու: Համաճարակ կար մըրախտէն եւ փողոցաւէն օրական 5-6 տղայ կը մեռնին, Սի քանի ուրիշ իվեր խանութներն ու մաղաղաները կանոնաւորապէս կը բացուին, եւ անոնք որոց խանութները փակած են, իրենց համար փայտակերտ խանութներ կը շինեն: Աղքատաց վիշտն ամբողջ, որդեկորոյս մայրերուն աղի արտօսը սրբելու, աղքատին խրճիթին ու ազգ. կայուածոց նորոքումն եւ Աղք. Խնամակալութեան մատակարարութեան եղանակին վրայ հակելու համար, ընդ նախադասութեամբ մըրաջան Առաջ. Տ. Ջաւէն Մ. վարդապետի, բանիբուն եւ գործունեաց աղջկաններէ յատուկ յանձնաժողով մը կազմուեցաւ: Բիւր շնորհակալութեան արժանի են Պոլսեցի վաճառական Թոփալիան եղբարք, որք այս պահուս հաճեցան կարիքի Երկանեան Գալուստ Էֆ. Ի ձեռամբ 20 ոսկի յանձնել սոյն յանձնաժողովին, որորմէն արկածախնդրու անմիջական պիտոյքն հողալու համար, արդէն 30 ոսկի ալ Պոլսոյ հանգանակիչ յանձնախումբին առած էին: Դժբաղդ Կարենցիներուն ողբալի կացութիւնը մեղմելու նպատակաւ՝ Առաջնորդարանէն գիւմուսներ եղան արտասահման գաւառացի ազգայիններէ նպաստ խնդրելու համար. տաճի երկինք որ լսելի ըլլար առաջնորդարանին ձայնը, որ իրենց սրտին բարեպաշտիկ զգացումներուն անսալով. փութային օգնութեան ձեռք կարկառել: Երկրաչափները իրոտ կ'ափսոսան հոյակապ Մայր եկեղեցոյ կիսաւեր վիճակէն, որու համար երկու անգամ պաշտօնական քննութիւն կատարելով, նորոգութեան համար 6000 ոսկեոյ ծախք կենթադրեն, 200 ոսկի եւս Արծնեան վարժարանի յաւակից նորաշէն դպրոցի նորոգութեան համար: Հոփախմբան վարժարանը բոլորովին անբնակելի եղած է: Վարժարանի համար ա՛յնքան հոգ չենք ընել որքան եկեղեցիի, որովհետեւ յառաջիկային կրնանք Սանտարան վարժարանը մեր անհրաժեշտ պիտոյից գործածել, քանի որ ազգ. սեփականութիւնը ըլլալով պայմանաւորաբար ալ լրանալու լծաւ է: Իսկ եկեղեցիին ինչպէս ընենք որ ուրիշը չունինք, ահա կարենցիներն զբաղեցնող գլխաւոր եւ կարեւորագոյն հարցը, որու առջեւ իրաւամբ կարծէ կանգ առնել: Տեղի ունեցած զօրաւոր ցնցումներուն առթիւ Ս. Լուսաւորչի վանուց եկեղեցիներն ալ, պարիսպներն ալ, սենեակներն ալ կ'իսող չափ փրած են: Բանտերու խարխուլ վիճակին պատճառաւ բոլոր բանտարկեալները Տրապիզոն փոխադրուեցան:

— Իր շահատակութեամբը անուանի Ջըլլզան ցեղէն հոչակաւոր աւաղակապտ Թանաս, որ ատենէ մը ի վեր Տրապիզիթի եւ Թէրջանի կողմերը կասպառակէր, եւ մեծ ահ ու սարսափ պատճառած էր չրջակայ գիւղօրէից ու ճանապարհորդաց, տեղական կառավարութեան ձեռք առած ազդու միջոցներուն շնորհիւ, իր արբանակներով եկաւ ոստիկանութեան յանձնուեցաւ, որ անմիջապէս բանտ զերուելով, կուսակալ նազըմ պէյ սկըսաւ խիստ կարգաւորութեան մը բողոքէն անցնել, ուրիշ արբանակները եւ գողցնթայոցները ձեռք բերելու համար:

Մ. Խ. Շ.

«ՀՈՒԳՈՒՔ»ԻՆ ՀԱՄԱՐ

Առ. Պ. Վարդո, Թուրքերէն կարգացուելու եւ նոնց Հայերուս գէժ ունեցած հակակրօթիւնը մեղմացնելու համար թուրքի գիւմուսի տակ հրատարակուող «Հուգուք» թերթը, «Օսմանլիլարըն հուգուքը մէտէնիէ վէ սիլասիյէսինի մահաֆազա իտէր հաֆթալը կապէթու տրը» բոնիէ գաւտ ինչ գիւմակ կրնար ընտրել իրեն:

Արդեօք «Երմէնիլէրին հուգուքընը մահաֆազա իտէր» բոնիէ է՞ր. այդ պարագային ո՞ր թուրքը կ'աւանդէ ոչ կը կարդար այդ բերքը:

Սակայն բոլոր չորամիտները թող կարգան «Դրօշակ»ի 98 թուին 6 թիւին մէջ «Աւաջին քուլ» յօդուածին առ պարբերութիւնը, «Դաշնակցութիւնը հէյց առաջին օրից քարոզելէ որ, օսմանեան պետութիւնը կազմող բոլոր ազգութիւնները յեղափոխականները իսլամականքն մի դրօշակի շուրջ»: Հետեւեալ «Դրօշակ»ի ալ, ինչպէս ամբողջ աշխարհ, օսմանեան կաթ օսմանը լարաւորով թուրքի մէջ ընկող ամբողջ ազգութիւնները կը հասկնայ, «Հուգուք» եւս այդ ամբողջ ազգութիւններէ իրաւունքները պաշտպանելու գիւմակին տակ միայն կրնար երեւան գալ. իսկ անոր խմբագիրը իբրեւ հայ իր ազգային թերթով մէկէ աւելի անգամինը ցոյց տուած է հայերուն թէ ինչ վերապահութեամբ պէտք է վերաբերուիլ դէպի ժէօն թուրքերը:

Կարծեմ գեռ շատեր մտցած չեն «Դրօշակ»ի առ խօսքն ալ թէ «ապագայ Հայաստանին համար կառավարիչ եղողին անունը Ա.Տ. մէտ ըլլալ կամ Լիւս» ըլլալ մի. և նոյն բանն է:

Թ. Փ.

Վառնա, 1904 թուիս. 30

Յ. Գ. Մէկ օրինակ ալ «Շալ Ժու» մին լրկած եմ, խմբագրով որ յանուն անկողնակալութեան հրատարակէ: (*)

Նոյն

ՍՏՈՐ ՄԱՏՆՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ

Զարգ հրատարակուած թեր ու գէժ գրութիւններով ստոր մատնութեան խմբորդին մէջ Շահրիմանի ունեցած դերը թէեւ բաւական պարզուեցաւ, բայց իր մասին ալ վճիռ մը արձակելէ առաջ, անկողնակալութիւնը մեր վրայ պարտք կը դնէ անգամ մըն ու խօսք տալ Լեւոն Սարգսեանի:

Թէեւ Սարգսեան ոճիրին բուն

(*) Անկողնակալութիւն եւ Շահրիման, ո՞րչափ իրարմէ հեռու...

Դիս. Խմբ.

հեղինակը, անգամայնորէն դատարարուած մը ու բարոյապէս մեռած մէկը ըլլալով, իր վկայութիւնը որքէք չունի, բայց կրնայ ըլլալ որ ցարդ ծածկուած զաղտ. նիք մը կամ ուշադրութենէ վրէպած պարագայ մը մէջ տեղ բերէ, զոր դրական փաստերով ու կենդանի վկայներով հաստատել կարելի ըլլալ:

Ուստի եթէ այդպէս մտած կէտ մը կայ վ. Շահրիմանի պատասխանատուութիւնը ծանրացնող կամ անոր ինքնաբերականութիւնը համար թուած պարագաները շրոյ, պէտք է զայն Լ. Սարգսեան մատնանիչ ընէ մինչեւ 15 օր, Հակառակ պարագային, իր լուծիւմբը իշ. Շահրիմանի թուած շատ մը կէտերուն կատարելապէս ճշգրտութիւնը հաստատած պիտի ըլլալ:

Փիլիպէ, 28 Նոյ. 1904

Նոր ձեռք կ'անցնի Շարժումի նուիրելի Լէ թուակիր համար, ուր Պ. Լիւսմ Բագարաւ կը հրատարակէ Բարեկէն ուղղուած գրութիւն մը որուն մէջ ինծի համար էն կարեւոր կէտը սա է թէ «Պր. Շահրիմանի պատճառութեամբ լսելով, կասկածներ ունեցեր եմ իր մասին» ու փութացել եմ դանոյն իսկոյն հաղորդելու Պ. Բագարաւին:

Ներկայիս կուգամ բացարձակապէս յայտարարել թէ այդօրինակ կասկածներ երբէք Լ. Ս. մէկ պարագայի տակ ծնունդ առած են մտքիս մէջ, ու, հետեւաբար, ներթապէս անկարելի էր ինծի հաղորդել զանոնք Պր. Բագարաւի կամ ուրիշ ու եւ մարդկային արարածի:

Ա.Բ.Գ.Ս. Մ. ՊԱՐԱՄԱՐԱՆ

ՆԱՄԱԿ ԽՄԱԿԱՆՈՒԹԵԱՆ

... Խմբագրի.

«Իրաւունք»ի 86 թիւին մէջ Գրիգոր Նիկողոսեան կեղծ տնուն տակ կ'ըկուտ սրիկայ մը, չեմ գիտեր ինչ ճիւղային նպատակաւ կը յանգցնի հանրութիւնը խաբել՝ որպէս թէ ես անձնապէս եղած եմ, Արդ՝ հրապարակու կը յայտարարեմ այդ գողանին և իր վնասակար թէ՛ ես անձնապէս ըլլալու երբէք պատճառ մը չունիմ. բայց ինք և իր վնասակար բարոյական աշխարհին համար արդէն յախտնապէս ստեղծուած են. և հիմա ինձ հետ բոլոր ծանօթներս իրաւունք ունին հաւատալու թէ՛ ժամանակէ մը ի վեր անձիս նկատմամբ՝ քրջա, և քրջա բնութեամբ ինծի և ուրիշներուն դրկուած անստորագիր նամակները այս սաղաթին և իր լէգէնին մեքենայութիւններն են. Բայց թող անհոգ ըլլալ. զի երբէք անտարբեր չեմ այս խմբորդին մէջ և ուշ կամ կանուխ իր օճիքը ձեռքս կ'անցնեմ. այն ատեն թող ձեռքս ապառի:

Ներկայս հաճեցէք անփոփոխ հրատարակել:

Երուսաղիմ Ն. Գ. Ս. Նիկողոսեան

ԻՐԱՆԻՈՒՆՔԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Ստացած են հետեւեալ ըստ մեղիները

Տ. Կ. Յովաննէս Սամուիլ 6 ֆր.

Տ. Ճ. Տալուա. Գոռոյ 11 »

Տ. Յ. Սամուէլ. Գալարեան 6 »

Տ. Ս. Արաճաճ. Մէճիթի 7 »

Տ. Գ. Երանոս. գիւղը 12 »

Տ. Կ. Խոյլեան Գալանլիկ 7 »

Տ. Ա. Շ. Թ. Բագարաւ 6 »

Տ. Գ. Դրիգոր. Սիլիօֆ 12 »

Տ. Ս. Յովսէփ. Ֆայում 7 »

Տ. Մ. Ստեփան Նիքորոյ 6 »

— Ա. Շ. ԲԱԶԱՐՃԻՐ. — Հայաստանի բարենորոգմանը ծրագիրը ամբողջովին թարգմանելով, թերթին մէջ հրատարակած ենք արդէն. շարունակելի չէ. թէեւ է՛ն վերջին փափին տակը սխալմամբ շարունակելի դրուած էր. գրաւորի սխալ, որ գրաւորաբար ստեղծ կը պատահէ:

Ա. Զ. Գ.

Վառնայի ազգային մանկապարտէզին համար կարող մանկապարտիկ պատմութիւն մը կուգուի. գոհացողիչ ամսագրակ. դիմել անձամբ կամ ամսական Ազգ. Երկ. սեռ փութարանաց Հոգարարձութեան:

Ա. Զ. Գ. Ս. Մ. ՊԱՐԱՄԱՐԱՆ

Սիսի կուլտուրի ընտրութեան «Առաջին քուլ» քուլտուրի ընտրութեան արդիւնքը եղող վեցանուն ցանկէն Գոռոյ չորս անունները ջնջելով միայն երկու անունի վրայ վերջին քուլտուրիւթիւնը կատարել հրաժարուած է: Այսինքն Սահակ Կարիս. Խապա. Եւս. Գեորգ. Եւս. Երեմեան. Պատրիարքը զատական նախարարութեան այս հրահանգը խառն ժողովոյ հաղորդել անմիջապէս վերջ հեռագրած է Տ. Սահակ Սրբազանի որ ընտրութիւնը կատարել տայ: Գոռոյ ալ Ստանայի կուսակալին հեռագրու հաղորդած է նոյն հրահանգը:

Զարգ ընտրութիւնը կատարուած լինցած և անկատար Տ. Սահակ Կարիս. Կաթողիկոս ընտրուած պիտի ըլլայ:

— Թիֆլիսէ կը գրեն թէ Հմայակ վարդապետ Սարգսեանի, Սամուէլ Սողմանեան և Գարեգին Գալստեան քահանաները թիֆլիսի վերաբնիչ առեանին առջեւ պիտի դատուին: Այդ եկեղեցականները՝ ուսուցչականութիւնը, դռնած խումբ մը հայեր (իգաթի մօտակայ գիւղերէն) կրկին իրենց մայրենի եկեղեցոյ գիրգը դարձուցած ըլլալուն համար ամբաստանուած են ընդհանուր դատաւարէն: Երեւանի նահանգական դատարանը գործը քննելով անպարտ արձակած է այդ երեք հայ եկեղեցականները, բայց ընդհանուր դատաւարը վերաքննութեան դիմած է:

— Պանտրիայի Հայոց եկեղեցին գողեր մտած և ալ ժէքաւոր բոլոր իրեղենները գողցած էին անցեալ

Печатница "Взаимностъ", Варна